

Աշխատանքի շրջանակները

Ջրից դեպի շուկա ծրագրի Խորհրդատուն պատասխանատու է լինելու ծրագրի հաջող կառավարման եւ իրականացման համար: Պատասխանատու չլինելով Ջրօգտագործողների միությունների ինստիտուցիոնալ հզորացման ենթաբաղադրիչի համար՝ ծրագիրը իրականացնելու ընթացքում Խորհրդատուն կհամագործակցի «Ջրային տնտեսության զարգացման եւ բարեփոխումների» ԾԻԳ-ի հետ: Խորհրդատուի կողմից կիրականցվեն հետևյալ միջոցառումները.

1. Ներտնտեսային ջրի կառավարման նոր տեխնոլոգիաների ներդրում

Խորհրդատուն կնշակի եւ կիրականացնի ցուցադրական տնտեսությունների ստեղծման եւ ուսուցման ամբողջական ծրագիր, որպեսզի ստանա տնտեսությունների ներսում բարելավված ջրի կառավարման արդյունք: Դա ներառելու է ուսուցման ծրագրի եւ նյութերի մշակում, մանրամասն բացատրություն ցուցադրական տնտեսությունների ստեղծման եւ օգտագործման մասին, այդ թվում՝ գեներային վերլուծություն:

ա. Ցուցադրական տնտեսություններ

Խորհրդատուն կստեղծի ցուցադրական տնտեսություններ, որպեսզի ներմուծի ներտնտեսային ջրի կառավարման նոր առաջավոր տեխնոլոգիաներ այն գյուղական համայնքներում, որոնք կօգտվեն ոռոգման համակարգերի վերականգնումից: Գործունեության համար նախատեսված 220 ցուցադրական տնտեսություններից առնվազն 120-ը կներկայացնեն ջրի արդյունավետ կառավարման պրակտիկան ու տեխնոլոգիան: Այդ ցուցադրական տնտեսությունները կծառայեն որպես հիմք ֆերմերներին ուսուցանելու համար բարելավված ֆերմերային աշխատանքի, նոր տեխնոլոգիաների շահագործման ու պահպանման համար: Նրանց մոտիկությունը շահառու տնտեսություններին նաեւ կօգնի ծանոթությանը, որը նախորդում է ռիսկին չհակված գյուղական համայնքներում փոփոխությունների ընդունմանը: ՀՄՀ-Հայաստանը եւ Խորհրդատուն համատեղ կսահմանեն ցուցադրական տնտեսությունների հիմնադրման համապատասխան մեթոդաբանությունը եւ ժամանակացույցը: Ցուցադրական տնտեսությունների հիմնումը պետք է տեղի ունենա հանրային քննարկումներին եւ շահառուների ընտրությանը զուգահեռ: Տնտեսությունների թիվը կախված կլինի շահառու համայնքների եւ ֆերմերների ընտրության արդյունքներից:

բ. Ուսուցում

Խորհրդատուն կուսուցանի համաձայնեցված մեթոդաբանությանը համապատասխան ընտրված 60,000 ֆերմերների, հիմնականում աշխատելով այն կազմակերպությունների հետ, որոնք տեղին ծանոթ են, նաեւ այն ուսուցանողների հետ, ովքեր կցված են ֆերմերների խմբերին: Սույն ծրագիրը կապահովի ոռոգման պրակտիկայի եւ տեխնոլոգիաների դասարանային ուսուցում, համայնքային սեմինարներ եւ այցելություն ցուցադրական տնտեսություններ: Ամբողջական կերպով կապված լինելով ցուցադրման գործընթացի հետ՝ այս ուսուցումը կընդգրկի եւ գյուղատնտեսական աշխատանքներ, եւ

նոր սարքավորումների ու տեխնոլոգիայի կիրառում, որոնցով կոնկրետ մշակաբույսերի ու պայմանների համար ջուրն առավել արդյունավետ կերպով կօգտագործվի (տես Հավելված 2):

2. Անցում դեպի բարձրաժեք գյուղատնտեսական արտադրություն

Խորհրդատուն կմշակի ու կիրականացնի ցուցադրական տնտեսությունների ստեղծման եւ ուսուցման ամբողջական ծրագիր, որպեսզի հասնեն դեպի բարձրաժեք գյուղատնտեսության ցուցադրական արդյունքներին: Դա ներառելու է ուսուցման ծրագրի եւ նյութերի մշակում, մանրամասն բացատրություն ցուցադրական տնտեսությունների ստեղծման եւ օգտագործման մասին, այդ թվում՝ գեներային վերլուծությունից քաղած դասերը:

ա. Ցուցադրական տնտեսություններ

Հատկապես փոքր տնտեսությունների դեպքում, գյուղացիական տնտեսությունները սահմանափակ աշխատուժով, կապիտալով, հողով եւ այլ գործոններով կախված են ժամանակից, համատեղված մշակաբույսերից, անասնակերի արտադրությունից եւ բնական պարարտանյութերի մատչելիությունից: Հետեւաբար, Խորհրդատուն պատասխանատու է լինելու ամբողջական ցուցադրական տնտեսությունների ստեղծման համար: Առնվազն 100 ցուցադրական տնտեսություններ կստեղծվի բարձրաժեք գյուղատնտեսական արտադրանքի ցուցադրման համար: Բարձրաժեք գյուղատնտեսության տարրերը, ի թիվս այլոց, ներառում են մրգերի ու բանջարեղենի որակի ստանդարտացման ու ավելացման բարելաված արտադրության եւ աշխատառձի օգտագործում, այնպիսի միանյա մշակաբույսերի ավելացում, ինչպիսիք են՝ ընդդեմները կամ սեխը ձմեռային մշակաբույսերի բերքից հետո, այգեգործական մշակաբույսերի ընդլայնումը եւ անասունների ու թռչունների ներմուծումը բարձրորակ վերամշակողներին մատակարարելու համար:

բ. Ուսուցում

Աշխատելով այն կազմակերպությունների հետ, որոնք լավ գիտեն տվյալ վայրը՝ ֆերմերային խմբերին կցված ուսուցանողների հետ՝ Խորհրդատուն կապահովի դասասենյակային ուսուցում, համայնքային սեմինարներ եւ այցելություն ցուցադրական տնտեսություններ՝ բարձրաժեք գյուղատնտեսության ոլորտում, 30,000 ֆերմերի համար, որոնց կընտրվեն ՀՄՀ-Հայաստանի եւ ՀՄԿ-ի կողմից համաձայնեցված մեթոդաբանության համաձայն: Ուսուցումը կներառի նաեւ լավագույն փորձի կիրառման վավերացման հնարավորությունը: Կապված լինելով ցուցադրական ծրագրի հետ, այս ուսուցումը կընդգրկի եւ գյուղատնտեսական աշխատանքներ, եւ նոր սարքավորումների ու տեխնոլոգիայի կիրառում՝ տնտեսություններում արտադրված ապրանքների առևտրային արժեքի բարձրացման համար: Բարձրաժեք գյուղատնտեսության համար ուսուցման ու տեխնիկական աջակցության կարելու մասը կլինեն ավելի մեծ

տնտեսության արտադրության կազմակերպման զանազան միջոցները, այդ թվում՝ հողի վարձակալությունը, կոոպերատիվները եւ ֆերմերային խմբերը (տես Հավելված 2):

3. Հետերքահավաքային տեխնոլոգիաներ, վերամշակում եւ մարքետինգ

Խորհրդատուն կմշակի եւ կիրականացնի ուսուցման, ցուցադրության եւ տեխնիկական աջակցության փաթեթներ այն արտադրողների ու ձեռնարկությունների համար, որոնք զբաղված են կոնկրետ արտադրանքի, կամ արտադրանքի խմբերի հետերքահավաքային արժեքների շղթայում: Այդ փաթեթների առանցքից մեկը կլինի սննդի անվտանգության հարցերը, ինչպիսիք են Ստանդարտների միջազգային կազմակերպության հավաստագրումը (սերտիֆիկացում), որոնք կամ կպահանջվեն շուկա մուտք գործելու համար, կամ կառաջարկեն պոտենցիալ շուկայի առավելություն: Կոնկրետ պայմանավորվածությունները կտարբերակվեն ըստ կոնկրետ ապրանքի կամ խմբի կարիքների ու շուկայական հնարավորությունների, սակայն ծառայությունների շրջանակը կարող է տատանվել արժեքների շղթայի ամբողջ երկայնքով:

ա. Մարկետինգային տեղեկատվության բարելավումը

Խորհրդատուն ուսումնասիրություններ կկատարի առանձին արտադրանքի խմբերի մատակարարների ու հետերքահավաքային ձեռնարկությունների անունից՝ ի պատասխան հետաքրքրության եւ առկա հնարավորության: Ուսումնասիրություններն սկսվում են մրցակցային դիրքի վերլուծությունից մինչեւ ապրանքի մարքետինգի պլանների մշակում: Խորհրդատուն կմշակի տեղական, տարածաշրջանային ու միջազգային շուկաների համար գյուղատնտեսական ապրանքների ավելի համապարփակ եւ արդյունավետ տեղեկատվական բազա: Վերջինս կարող է կազմված լինել իրական ժամանակում էլեկտրոնային գրադարանից, որը միմյանց է կապում առկա աղբյուրները, հիմնական շուկայական մատչելի տեղեկատվական գրադարանները՝ եւ էլեկտրոնային, եւ տպագիր, ինչպիսիք են փաթեթավորման, առողջապահական եւ որակի ստանդարտները, առանցքային միջնորդների համար մատակարարման եւ անհետացման նմուշները եւ շփման կետերը: Այս բաղադրիչի կառուցվածքը, վայրն ու տեխնիկական աջակցությունը նույնականացնելիս շեշտը պետք է դրվի այն բանի վրա, որ պետք է հենվել այս բնագավառում նախկինում մի քանի դոմորների շնորհիվ իրականացված ծրագրերի արդյունքների վրա: Այս ծառայության նախագծման կարևոր մասը կլինի այնպիսի միջոցների մշակումը, ինչպիսիք են բաժանորդագրության վրա հիմնված ինտերնետային կայքերը եւ այլ վճարովի ծառայությունների վարձեր, որոնք կարող են ապագայում ֆինանսավորում ապահովել:

բ. Աջակցություն հետերքահավաքային տեխնոլոգիաների, վերամշակման ու մարքետինգի ոլորտում

Խորհրդատուն կապահովի տեխնիկական օժանդակություն ու ցուցադրություններ, որոնք կբարելավեն փոքր ու միջին ձեռնարկությունների, կոոպերատիվների ու ագրոբիզնեսի այլ ձեւերի գործունեությունը, որոնք ընդգրկում են նաեւ նոր սարքավորումների ու

տեխնոլոգիաների կիրառում, գյուղատնտեսական արտադրությունը՝ սկսած արտադրողներից մինչև սպառող: Գործունեությունը միտված կլինի գյուղատնտեսական արտադրանքի պահեստավորման, տեսակավորման եւ փաթեթավորման, տեղափոխման ու վերամշակման համար նոր տեխնոլոգիաների ներմուծմանը, առևտրական կապերի զարգացմանը, ուսուցմանը եւ որակի միջազգային ստանդարտների ներդրմանը: Բարելավված մատակարարման հարաբերությունները հետքերքահավաքային ձեռնարկությունների ու նրանց ֆերմերային մատակարարների միջև կլինեն այս ենթագործունեության մեկ այլ կարելու կողմը: Մոտ 300 փոքր ու միջին ձեռնարկություններ, կոոպերատիվներ ու արտադրողների միություններ եւ 15,000 ֆերմեր կշահի այս ծառայություններից: Այդ գործունեության մի մասը կպահանջի հատուկ ապրանքների, շուկաների կամ առևտրային փոխհարաբերությունների մասին մանրամասն գիտելիքներ:

4. Վարկերի մատչելիության բարձրացում

Խորհրդատուն օժանդակելու է Ջրից դեպի շուկա բաղադրիչի շահառուներին երկարաժամկետ վարկային միջոցների աճին՝ իրականացնելով երեք խումբ միջոցառումներ. (I) Գյուղական ֆինանսավորման կառույց պետական հիմնարկին օժանդակություն՝ Ջրից դեպի շուկա բաղադրիչի Վարկային ծրագիրը սկսելու եւ վերահսկելու համար; (II) վարկային կազմակերպությունների (ընտրված բանկեր եւ վարկային կազմակերպություններ) կարողությունների զարգացում՝ գյուղատնտեսությունը արդյունավետ վարկավորելու համար; և (III) Ջրից դեպի շուկա բաղադրիչի շահառուների կարողությունների զարգացում՝ վարկերի ստացման և արդյունավետ օգտագործելու համար:

ա. «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի Վարկային ծրագիր

«Գյուղական ֆինանսավորման կառույց» պետական հիմնարկը նորաստեղծ կազմակերպություն է, որը հիմնվել է գյուղացիական զարգացման ոլորտում վարկային ծրագրերի կառավարման համար: Մոտ մեկ տարի այն կառավարում է Համաշխարհային բանկի եւ Գյուղացիական զարգացման միջազգային հիմնադրամի ծրագրերը, որոնք նման են Ջրից դեպի շուկա բաղադրիչի Վարկային ծրագրին: Ջրից դեպի շուկա բաղադրիչի կառավարիչը որպես խորհրդատու կօժանդակի ՀՄՀ-Հայաստանին եւ «Գյուղական ֆինանսավորման կառույց» պետական հիմնարկին՝ սկսել եւ վերահսկել 8.500,000 ԱՄՆ դոլար Վարկային ծրագիրը, իրականացնելով հետեւյալ միջոցառումները.

- Ø ՀՄՀ-Հայաստանի և ԳՖԿ-ի հետ համատեղ պատրաստել Վարկային ուղեցույց, որը ընդունելի կլինեն ՀՄԿ-ի և ՀՄՀ-Հաստանի կողմից: ՀՄՀ-Հայաստանը պատրաստել է մի փաստաթուղթ: Խորհրդատուն կլրամշակի այդ փաստաթուղթը ՀՄՀ-Հայաստանի եւ ԳՖԿ-ի հետ համատեղ՝ հաշվի առնելով բնապահպանական

(ներառյալ գենդերային) կայունության պահանջը եւ համապատասխանությունը ՀՀ իրավական ակտերին:

- Ø **Տրամադրել տեխնիկական օժանդակություն և խորհրդատվություն:** Խորհրդատուն կտրամադրի ԳՖԿ-ի աշխատակիցներին եւ հետաքրքրված ֆինանսական կազմակերպություններին տեխնիկական օժանդակություն: Խորհրդատուն ընդգրկված չի լինի վարկային կազմակերպությունների ընտրության եւ վարկերի տրամադրման վերաբերյալ որոշումների ընդունման մեջ (Խորհրդատուն կօժանդակի ՀՄՀ-Հայաստանին ներդնել վարկային կազմակերպությունների ընտրության չափանիշները, իսկ վարկային կազմակերպությունների ընտրությունը կիրականացնի ՀՄՀ-Հայաստանը՝ ներառելով ընտրության արդյունքները վարկավորման գործընթացը կարգավորող փաստաթղթում: Այդ փաստաթուղթը ենթակա է հաստատման ՀՄԿ-ի կողմից):
- Ø **Օժանդակություն ԳՖԿ-ին:** Խորհրդատուն կօժանդակի ԳՖԿ-ին ներդնել վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված առանձին վարկերի աուդիտն իրականացնելու ընթացակարգերը՝ հաշվի առնելով շահերի բախումը, որը առաջանում է Խորհրդատուի մասնակցությունից վարկավորման գործընթացը կարգավորող փաստաթղթերի մշակմանը մասնակցությունից:
- Ø **Աուդիտ:** Խորհրդատուն կիրառելի ԳՖԿ-ին, ՀՄՀ-Հայաստանին եւ մասնակից ֆինանսական կազմակերպություններին աուդիտի դերի կարելիության մասին: Խորհրդատուն առաջարկություններ կներկայացնի վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված առանձին վարկերի աուդիտի ընթացակարգերի վերաբերյալ:
- Ø **Վարկային ծրագրի հանրային քննարկումներ:** Խորհրդատուն կներառի վարկային ծրագրի մասին հանրային իրազեկման տեղեկատվությունը բոլոր ուսուցման ծրագրերում: Խորհրդատուն նաեւ կպահանջի մասնակցող վարկային կազմակերպություններից փակել այդ ծախսերի մի մասը՝ որպես պայման վարկային ծրագրում մասնակցելու համար:

բ. Վարկային կազմակերպությունների կարողությունների զարգացում

Խորհրդատուն կիրականացնի մասնակից վարկային կազմակերպությունների կարողությունների զարգացումը: Մասնակից վարկային կազմակերպությունները ունեն սահմանափակ փորձ երկարաժամկետ գյուղացիական վարկերի տրամադրման ոլորտում: Խորհրդատուն կներկայացնի գյուղացիական եւ գյուղատնտեսական

վարկավորման հետ կապված հնարավորությունները ու ռիսկերը եւ կօժանդակի վարկային կազմակերպություններին ներդնել վարկային ընթացակարգեր գյուղատնտեսության վարկավորման համար: Խորհրդատուն կհամագործակցի ֆինանսական ոլորտում այլ դոնորների կողմից իրականացվող ծրագրերի հետ՝ կենտրոնանալով գյուղացիական եւ գյուղատնտեսական վարկավորման ոլորտում իրականացվող ծրագրերի վրա: Այստեղ հիմնական նպատակը հանդիսանում է գյուղատնտեսական երկարաժամկետ վարկավորման աճ՝ ցույց տալով, որ այս ոլորտի վարկավորումը կարող է խելամիտ իրականացվել եւ լինել շահութաբեր: Մասնավորապես, կիրականցվեն հետեւյալ միջոցառումները.

- Ø Օժանդակել հետաքրքրված վարկային կազմակերպություններին դիմել ծրագրին մասնակցելու համար:
- Ø Օժանդակել ընտրված վարկային կազմակերպություններին մշակել վարկային դիմումները:
- Ø Օժանդակել վարկային կազմակերպություններին ներդնել վարկային ընթացակարգեր գյուղատնտեսության վարկավորման համար:
- Ø Օժանդակել վարկային կազմակերպություններին՝ տրամադրելով համապատասխան ուսուցում գյուղացիական եւ գյուղատնտեսական վարկավորման ոլորտում:

գ. Ջրից դեպի շուկա բաղադրիչի շահառուների կարողությունների զարգացում

Խորհրդատուն նաեւ կտրամադրի օժանդակություն Ջրից դեպի շուկա բաղադրիչի շահառուներին. (I) բարելավելով իրենց ունակությունները վարկերին դիմելու համար; եւ (II) բարձրացնելով իրենց իրազեկվածությունը եւ գիտելիքները վարկերի մասին: Այս գործունեության նպատակ է հանդիսանում խորացնել միջնորդության մակարդակը եւ նվազեցնել վարկային կազմակերպությունների վարկերի տրամադրման հետ կապված ծախսերը եւ ռիսկերը՝ պատրաստելով իրազեկված վարկառուներ: Մասնավորապես, կիրականցվեն հետեւյալ միջոցառումները.

- Ø Օժանդակել հնարավոր վարկառուներին լրացնել վարկային դիմումները եւ այլ անհրաժեշտ տեղեկատվությունը՝ զարգացնելով իրենց ունակությունները եւ կապելով իրենց մասնավոր հատվածի ծառայություն մատուցող կազմակերպությունների հետ: Հաշվի առնելով, որ վարկերին դիմորդների թիվը մեծ է, Խորհրդատուն կաշխատի առանձին խմբերի հետ:
- Ø Օժանդակել հնարավոր վարկառուների ֆինանսական գրագիտության բարձրացմանը:

Հավելված 2

Ջրից դեպի շուկա բաղադրիչի արտադրանքի քանակի և արդյունքի թիրախները

	Ջրի կառավարման ուսուցում /արտադրանքի քանակ/	Բարձր ավելացված արժեքի ուսուցում /արտադրանքի քանակ/	Հետքերքահավաքային ուսուցում /արտադրանքի քանակ/	Տրամադրված վարկեր (նլն ԱՄՆ դոլար) /արդյունք/	Նոր տեխնոլոգիա օգտագործող ֆերմերներ /արդյունք/	Բարձր ավելացված արժեքի վերածված հեկտարներ /արդյունք/
	Ֆերմայում ջրի կառավարման ուսուցում անցած ֆերմերների թիվը	Դեպի բարձր ավելացված արժեքով արտադրանքի անցում վերապատրաստված ֆերմերների թիվը	Հետքերքահավաքային շրջանում օգնություն ստացած ձեռնարկույունների /ֆերմերային խմբերի թիվը	Ծրագրով նախատեսված վարկերի տրամադրում վարկերի հասանելիությունն ավելացնելու հարցում, որպեսզի բարելավվի գյուղատնտեսական գործունեությունը	Ֆերմերներ, ովքեր կիրառում են փոփոխություններ աշխատանքում կամ սարքավորումներում ուսուցման արդյունքում կամ իրենց ֆերմայում անհրաժեշտ ոռոգման ջրի ծավալը կրճատելու կամ ավելացնելու իրենց ոռոգատարածքի բերքը	Բարձր ավելացված արժեքի բերքով/ բանջարեղեն, կարտոֆիլ, մրգեր, խաղող/ ծածկված հեկտարների ավելացում ՀՄԿ-ի բոլոր ներդրումների շնորհիվ
տարի 1	2,000	-	-	-	-	-
տարի 2	13,000	1,000	60	3.5	3,000	35
տարի 3	19,000	6,000	90	3.5	9,550	1,110
տարի 4	19,000	11,000	90	1.5	12,950	4,090
տարի 5	7,000	12,000	60	-	12,850	2,610
Ընդ	60,000	30,000	300/15,000	8.5	38,350	7,845